

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ

<https://doi.org/10.59982/18294359-24.2-hv-08>

Վահե Աշոտի Թորոսյան

ի. գ. թ., դոցենտ

ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն

Vaxinak91@mail.ru

Ամփոփագիր

Գիտական հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության շրջանում ստեղծված «Իրավագետների և քաղաքագետների միության» գիտական-հասարակական գործունեությանը՝ շեշտադրելով վերջինիս դերը և ազդեցությունը նորանկախ պետության իրավաքաղաքական մտքի զարգացման գործում: Միությունը իր ակտիվ գործունեությունը իրականացրեց 1995-1998 թվականներին՝ հրատարակելով բազմաթիվ գիտական հոդվածներ, մենագրություններ, բուհական դասագրքեր, մատենաշարեր, գիտահանրամատչելի ձեռնարկներ, որոնք լայնորեն կիրառվեցին ինչպես ակադեմիական միջավայրում, այնպես էլ հասարակության լայն շրջանակներում:

Միությունը հրատարակեց նաև «Օրենք և Իշխանություն» ամսագիրը, որտեղ իրենց գիտական արդյունքները հրապարակեցին անվանի գիտնականներ, իրավագետներ, քաղաքագետներ, հասարակական և քաղաքական գործիչներ: Բացի այդ Միությունը կարողացավ արդեն իսկ ընդունված օրենքները դարձնել հանրային սեփականություն, ապահովել դրանց հրապարակայնությունը և մատչելիությունը:

Պետք է խոստովանել, որ Միության գործունեությունը և դերը ներկա ժամանակներում համակողմանիորեն ուսումնասիրված և արժանիորեն գնահատված չէ, որի փարատմանը ուղղված է մեր այս հոդվածը: Կարծում ենք, որ այն կնպաստի Միության գործունեության լուսաբանմանը, նրա խնդիրների և նպատակների վերհանմանը՝ արժանին մատուցելով նրա շուրջը համախմբված գիտական և հասարակական գործիչներին, որոնք ահռելի աշխատանք կատարեցին՝ նպաստելով ոչ միայն հայրենական օրենսդրության կայացմանը, այլև հայ իրավաքաղաքական մտքի զարգացմանը:

Հիմնաբառեր. Իրավագետների և քաղաքագետների միություն, իրավունք, քաղաքագիտություն, օրենք և իշխանություն, իրավաքաղաքական միտք:

Ներածություն

1995թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետությունում գրանցվեց **«Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միություն»** գիտական-հասարակական կազմակերպությունը: Իր տեսակի մեջ ինքնատիպ և եզակի կազմակերպություն, որը այդ տարիներին չուներ իր նախատիպը: Թերևս կարող ենք հիշատակել միայն 1990 թվականին Իգնատ Մամյանի հիմնած **«Հայաստանի իրավաբանների միությունը»**, սակայն թե՛ գործունեության ուղղություններով, հոչակած նպատակներով և թե՛ մասշտաբներով դրանք խստորեն տարբերվում էին:

Միության ստեղծումը ժամանակի հրամայականն էր՝ պայմանավորված նորանկախ Հանրապետության իրավաքաղաքական իրականությամբ. *«Նոր քաղաքական իրավիճակը բնութագրվում էր Հանրապետության սոցիալ-քաղաքական կայունության ամրապնդմամբ և քաղաքական պայքարի վերջնական տեղափոխմամբ փողոցից՝ խորհրդարան, որի հետևանքով առաջ եկավ Հանրապետության հասարակական կյանքի իրավագիտական և քաղաքագիտական սպասարկման նոր որակի անհրաժեշտություն»* [Բաղդասարյան, «Օրենքը ծառայեցնել ժողովրդին», 13-16]:

Միության հիմնական նպատակն էր՝ Հանրապետության իրավագետների և քաղաքագետների գիտագործնական ներուժի մեկտեղումը: Միության նախագահ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արթուր Բաղդասարյանը հավաստում էր. *«Մենք խնդիր ենք դրել, որպեսզի միությունը ձևով և բովանդակությամբ դառնա էլիտար կազմակերպություն, ուր ներգրավված լինեն իրոք նոր խոսք ասելու կարող և մտահոգ գիտնականները»* [Օրենք և իշխանություն, 1995]: Միության առաջնահերթ խնդիրներից մեկը բարձրարժեք իրավաքաղաքական աշխատությունների հրատարակումն էր, իսկ գերխնդիրը՝ գիտությունը բարձրագույն արժեք դարձնելը՝ նպաստելով իրավական պետության ձևավորման և օրենքի գերակայության ապահովմանը:

Հարկ է ընդգծել, որ այդ ժամանակ դեռևս չկային կայացած գրահրատարակչական կազմակերպություններ, առավել ևս այնպիսիք, որոնք մեկնաբանեին ՀՀ օրենքները, դրանք առավել մատչելի դարձնեին հասարակությանը. *«Օրենքներ ստեղծելը մի խնդիր է, իսկ դրանք հասարակությանը հասցնելը մեկ այլ, ըստ որում չափազանց կարևոր ու արդիական խնդիր, քանի որ հակառակ դեպքում կարող է առաջանալ վտանգավոր խզում գործի ու խոսքի մեջ՝ հղի սոցիալական տարաբնույթ ցնցումներով»* [Բաղդասարյան, «Օրենքը հասցնել հասարակությանը»]:

Ակնհայտ է, որ Խորհրդային միության իրավական համակարգին փոխարինող կարգավորումները բավարար չափով հասանելի և մատչելի չէին հասարակությանը: Քաղաքացին շատ դեպքերում տարրական պատկերացում չուներ պետության սոցիալ-քաղաքական կեցության և պայմանների, նույնիսկ սեփական իրավունքների և պարտականությունների մասին: Ահա այդ բացը լրացնելու համար Միությունը ձեռնամուխ եղավ ոչ միայն մասնագիտական, այլ նաև հանրամատչելի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

աշխատությունների հրատարակմանը: Այն կարողացավ արդեն իսկ ընդունված օրենքները դարձնել հանրային սեփականություն, ապահովել դրանց հրապարակայնությունը և մատչելիությունը:

1995թ. նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ Միության ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը, գիտության բնագավառի ակնառու գործիչներ, մտավորականներ: Նորաստեղծ Միությանն իր հայրական օրհնանքն էր բերել Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպիսկոպոս Պոգոսյանը: Միությունը հրատարակեց *«Օրենք և իշխանություն» ամսագիրը* (Տե՛ս, Նկար 1), ինչպես նաև Հանրային հեռուստաընկերությունում հեռարձակեց «Օրենք և իշխանություն» հաղորդաշարը, որի հեղինակը և վարողը Արթուր Բաղդասարյանն էր:

Նկար 1.



«Օրենք և իշխանություն» ամսագիր, 1996թ., օգոստոս

Միությունը այս կերպ փորձում էր ՀՀ սահմաններից դուրս բնակվող մեր հայրենակիցներին ևս ունկնդիրը դարձնել Հայաստանում կատարվող իրավական բարեփոխումներին. *«Այն ամբողջ աշխատանքը, ինչ անում ենք հեռուստատեսությամբ պետք է «գրավոր» մնայուն ձևի մեջ դնել: Դա իմ կարծիքով ամսագիրն է անելու, որի հետ մեծ հույսեր եմ կապում: Այն լինելու է թե՛ գիտական և թե՛ հանրամատչելի: Տեսեք, մենք որոշակի փորձ ենք ձեռք բերել, օրենքներ ենք հրատարակում, գրքեր լույս ընծայում, գիտաժողովներ կազմակերպում, լուրջ սոցիոլոգիական հետազոտություններ ենք*

Հայ ընթերցողի սեղանին դրվեցին Ֆրանսիայի Հանրապետության պետական կառավարման համակարգին, օրենսդրությանը իրավական, տնտեսական կառուցակարգերին առնչվող շուրջ երկու տասնյակ ձեռնարկներ, որոնց պատասխանատուն Արթուր Բաղդասարյանն էր: Այդ հրատարակություններից մեկի նախաբանում նա նշում է. *«Բավական հարուստ է ֆրանսիական ժողովրդի պետականության սահմանադրական պատմությունը: Դեռևս հեռավոր ժամանակներից ի վեր Ֆրանսիան դիտվել է և դրսևորվել է իբրև եվրոպական զարգացած ժողովրդավարական ավանդույթներով կայուն մի պետականություն»* [Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությունը]: Համատեղ ծրագրեր և ֆինանսական օժանդակություն եղավ նաև ԱՄՆ կառավարության, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USID) կողմից [Հարցեր ու պատասխաններ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների մասին]:

Ներպետական մակարդակում Միությունը ևս համագործակցության լայն դաշտ ձևավորեց: ՀՀ ներքին գործերի նախարարության հետ ձեռք բերված համաձայնության արդյունքում տպագրվեցին «Ոստիկանությունը ժամանակակից աշխարհում», «Հայ ոստիկանի սեղանի գիրք», Մաքսային վարչության հետ՝ «Մաքսային իրավունք», Մաքսային օրենսդրություն, հարց և պատասխան» ձեռնարկները, ՀՀ կենտրոնական բանկի հետ՝ «Բանկային օրենսդրության ժողովածու» և այլն: Ինչպես նկատում է Ա. Բաղդասարյանը. *«Այսօրինակ մեր գործունեությամբ մենք լուծում ենք երեք կարևորագույն խնդիր. նախ ժողովրդին ցույց ենք տալիս իր իրավունքների ճանապարհը, երկրորդ՝ նպաստում ենք տվյալ ծառայության և հասարակության կապի ձևավորմանն ու ամրապնդմանը, վերջինիս հեղինակության բարձրացման աճին, և վերջապես, գիտնականի համար ստեղծում ենք արարելու, ստեղծագործելու, վաստակելու պայմաններ»* [Բաղդասարյան, «Օրենքը ծառայեցնել ժողովրդին», 13-16]:

Միության հրատարակած մատենաշարերից ուշագրավ էր նաև **«ՀՀ նախագահի ընտրություններ 1996թ. սեպտեմբեր 22»** շարքը (Տե՛ս, Նկար 3), որի նպատակն էր լուսաբանել նախագահի ինստիտուտի կարևորությունը, իրավական կարգավիճակը, արտասահմանյան փորձի վերլուծությունը՝ նպաստելով նաև Հանրապետությունում նախագահական ընտրությունների իրավական և քաղաքական լուսաբանմանը, նախագահի թեկնածուների տեսակետների հանրայնացմանը [Հանրապետության նախագահի ընտրության մասին], «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին», Եր, Մխիթար Գոշ, 1996թ. 132 էջ]:

Միության հրատարակած «Օրենք և իշխանություն» ամսագիրը 1997թ. ընդգրկվեց թեկնածուական ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ՀՀ ԲՈՁ-ի ընդունելի ամսագրերի ցանկում [Օրենք և իշխանություն, 1997, մայիս # 5 (12)]: Ամսագրում իրենց գիտական և հրապարակախոսական հոդվածները տպագրեցին անվանի գիտնականներ, իրավագետներ՝ Վլադիմիր Նազարյանը, Հենրիկ Խաչատրյանը, Գագիկ Հարությունյանը, Ռաֆիկ Պետրոսյանը, Գևորգ Դանիելյանը, Արմեն Երիցյանը,

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Ստեփանյանը, Գառնիկ Սաֆարյանը, Ֆելիքս Թոխյանը, Աշոտ Խաչատրյանը, Հրանտ Նազարյանը, Հայկ Խաչատրյանը, Գեղամ Ղարախանյանը, Ռոբերտ Ավագյանը, Պուշկին Սերոբյանը, քաղաքագետներ՝ Միեր Շահգեղոյանը, Իշխան Բայանը, Մարիամ Մարգարյանը և շատ ուրիշներ:

Միության կազմում գործում էր «Հորիզոն» քաղաքական, իրավական և ռազմավարական հետազոտությունների կենտրոնը, որի աշխատանքները համակարգում էր Միեր Շահգեղոյանը, իրավագիտական կենտրոնը՝ Հենրիկ Խաչատրյանի և սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը՝ Էմին Երիցյանի ղեկավարությամբ:

Միությունը իր գործունեության ընթացքում հիմնեց մասնաճյուղեր Հանրապետության ողջ տարածքում և տեղական մակարդակում ևս իրականացրեց օրենսդրության իրազեկման աշխատանքներ: ՀՀ տարբեր համայնքներում անցկացվեցին գիտաժողովներ և կոնֆերանսներ, որոնցից կարելի է հիշատակել տեղական ինքնակառավարման մարմինների համակարգին նվիրված կոնֆերանսը, որը ընդունեց բանաձև՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու կոնկրետ առաջարկներով՝ հանձնարարելով Միության պատգամավորական ակումբին դրանք ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը [Ավանգարդ, 1997, դեկտեմբեր, № 13-14]:

Նկար 3.



«ՀՀ նախագահի ընտրություններ 1996թ. սեպտեմբեր 22»

Նախագահի ընտրության կարգը ժամանակակից աշխարհում, Մ. Գոշ, Եր., 1996թ.

Միության գործունեությունը բարձր գնահատեցին պետական և քաղաքական գործիչները և գիտնականները: Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Գագիկ Հարությունյանը Միության հիմնադրման առթիվ նշեց. *«Նախ ես պետք է ուղջունեմ և՛ Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միության գործունեությունը, և՛ միության ձեռնարկած «Օրենք և իշխանություն» հեռուստահաղորդաշարը, և իհարկե նրա կողմից նորերս հիմնադրված նույնանուն «Օրենք և իշխանություն» ամսագրի ծնունդը»* [Հարությունյան, «Հարգանք օրենքի և անհանդուրժողականություն օրինազանցության նկատմամբ», *Օրենք և իշխանություն*, 1996 հուլիս, #2, էջ 5-11 էջ]:

Քաղաքական և պետական գործիչ Պարույր Հայրիկյանը ևս անդրադարձ կատարեց Միությանը. *«Ինձ շատ է դուր գալիս, որ այս միությամբ իրավագիտությունն ու քաղաքագիտությունը համատեղվում են: Ինձ համար այս նախաձեռնության մեջ ամենագրավիչը հենց այդ համատեղումն է: Այլ խոսքով՝ քաղաքականության իրավագիտացումը և իրավագիտության քաղաքագիտացում (բայց ոչ՝ քաղաքականացում)»* [Հայրիկյան, «...Այս կառույցը լինի մի հենարան», *Ավանգարդ*, 1995, նոյեմբեր, № 24]:

Պրոֆեսոր Մարիամ Մարգարյանն էլ իր հերթին ընդգծեց. *«Ես դրական եմ գնահատում այն փաստը, որ միության ղեկավար պարոն Ա. Բաղդասարյանը կարողանում է համախմբել բոլորիս, փնտրում է այն ռացիոնալ հատիկը, որը կա հայկական քաղաքական ընտրախավի մեջ և որը կծառայեցվի ժողովրդի քաղաքական կրթության և դաստիարակության գործին»* [Հայրիկյան, «...Այս կառույցը լինի մի հենարան»]: Ավելորդ չէ նշել, որ Միությունը հրատարակեց ՀՀ սահմանադրությունը (քառալեզու), միջազգային կոնվենցիաներ, օրենքներ ու օրենսգրքեր, այդ թվում՝ հարկային, մաքսային և բանկային օրենսդրությունը, առողջապահական օրենսդրությունը, սոցիալական օրենսդրությունը, իրավական բնույթի ուղեցույցներ և այլն: 2000-ական թվականների սկզբին Միությունը դադարեցրեց իր գործունեությունը:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք եզրահանգել, որ Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միությունը՝ որպես հասարակական կազմակերպություն, նորանկախ պետականության կայացման շրջանում շոշափելի դերակատարություն ունեցավ հայ իրավական և քաղաքական մտքի զարգացման, գիտական արդյունքների թողարկման և դասագրքերի հրատարակման գործում: Այն ազդեցիկ դեր կատարեց նաև հայրենական օրենսդրության կայացման, օրենքների և այլ իրավական ակտերի մշակման, դրանց դոկտրինալ մեկնաբանման, ինչպես նաև հրապարակման տեսանկյունից: Վստահաբար պետք է արձանագրել, որ Միության հրատարակած գրքերը և ավանդած գիտական ժառանգությունը այսօր էլ պահպանել են իրենց գիտականությունը և

արդիականությունը՝ ծառայելով որպես ակադեմիական կողմնորոշիչներ գիտական հանրության համար:

2025 թվականին կլրանա Հայաստանի իրավագետների և քաղաքագետների միության հիմնադրման 30 ամյակը: Լիահույս ենք, որ այս գիտական հոդվածը մեկնարկ կհանդիսանա Միության գործունեության և անցած ուղղու իմաստավորմանը և նորովի վեր հանմանը:

Գրականության ցանկ

1. Ա. Բաղդասարյան, «Օրենքը հասցնել հասարակությանը», Ավանգարդ, 1995, սեպտեմբեր, № 14:
2. Ա. Բաղդասարյան, «Օրենքը ծառայեցնել ժողովրդին», օրենք և իշխանություն, 1996 հուլիս, #2, էջ 13-16:
3. Ֆրանսիայի օրենքը Մազիստրատուրայի կարգավիճակի մասին, Եր., Մխիթար Գոշ, 1997, 56 էջ:
4. Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրությունը, Եր., Մխիթար Գոշ, նախաբանը՝ Ա. Բաղդասարյանի 1996, 88 էջ:
5. «Հանրապետության նախագահի ընտրության մասին», «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին», Եր, Մխիթար Գոշ, 1996թ. 132 էջ:
6. Գ. Հարությունյան, «Հարգանք օրենքի և անհանդուրժողականություն օրինազանցության նկատմամբ», Օրենք և իշխանություն, 1996 հուլիս, #2, էջ 5-11 էջ:
7. Պ. Հայրիկյան, «...Այս կառույցը լինի մի հենարան», Ավանգարդ, 1995, նոյեմբեր, № 24:
8. Հարցեր ու պատասխաններ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների մասին, պատ. իմբ. Ա. Բաղդասարյան, Եր., Մխիթար Գոշ, 1997, 176 էջ:
9. Օրենք և իշխանություն, 1997 , մայիս # 5 (12):
10. Օրենք և իշխանություն, 1995, նոյեմբեր, #1:
11. Ավանգարդ, 1997, դեկտեմբեր, № 13-14:

ARMENIAN UNION OF LAWYERS AND POLITICIANS IN THE OVERVIEW OF THE DEVELOPMENT OF LEGAL AND POLITICAL THOUGHT OF THE NEWLY INDEPENDENT STATE OF ARMENIA

Vahe Torosyan

PhD in Law, Associate Professor

EUA, Chair of Law

Vaxinak91@mail.ru

Abstract

The scientific article is dedicated to the scientific and social activities of the "Union of Jurists and Political Scientists" established during the independence of the Republic of Armenia, emphasizing its role and influence in the development of the legal and political thought of the newly independent state. The Union carried out its vigorous activities in the years 1995-1998, publishing many scientific articles, monographs, university textbooks, scientific manuals, which were widely used both in the academic sphere and within the public society.

The Union also published the magazine "Law and Power", where famous scientists, jurists, political scientists, public and political figures published their scientific results. Furthermore, the Union was able to make already adopted laws public property, ensure their publicity and accessibility.

It must be admitted that the activity and role of the Union in the present times has not been comprehensively studied and deservedly evaluated. We believe that it will contribute to the coverage of the activities of the Union, the overview of its problems and goals, paying tribute to the scientific and public figures gathered around it, who did a tremendous job, contributing not only to the establishment of national legislation, but also to the development of armenian legal and political thought.

Keywords: Union of jurists and political scientists, law, politics, law and power, legal and political thought.

Ներկայացվել է՝ 25.10.2024թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 13.12.2024թ.